

ՄԵՐ ՄԵԾ ԵԶՐԱՅԻՆՆԵՐԸ

1914 թվականի մեծ պատերազմը մի անգամ ևս ապացուցեց մարդկությանը, որ մարդկային ցեղի տեականությունը մեր սեփական ձեռքերի գործերով չէ որ ապահովվում է: Անասնական բնազդներից մղված, մարդիկ կոչվում էին միմյանց հետ, հիմքից սատանելով քաղաքակրթության ամբողջ շենքը:

Բայց և այնպես, ամենասարսափելի պահերին, պատմությունը արձանագրել է մարդկանց բազմաթիվ օրինակներ, որոնք զալիս են հաստատելու այն ճշմարտությունը, թե քաղաքակրթության շենքի անսասնությունը կարող է ապահովվել միայն Աստուծո օգնականությամբ և թե մեր աշխատանքը Տիրոջ մոտ իդոլը չի անցնի բնավ: Այդ մարդկանց մեջ ահա, ո՛չ ոք այնքան արժանի չի եղել փառքի, որքան այն մեծ հայերը, որոնք Գևորգ Ե Կաթողիկոսի գահակալության ժամանակ, 1915 թվականի ապրիլ ամսին սկսված զարհուրելի կոտորածների ընթացքում, մարտիրոսության պսակն ընդունեցին: Նրանք իրենց հույսը դնում էին ոչ թե երկրային կառավարությունների վրա, այլ բարեգութ Աստուծո Վերին Քաղաքի վրա:

Մեր օրերում, բոլոր ազգերի մեջ, երկրային բազմաթիվ ձայներ հորդորում են մեզ առաջնորդել Աստուծո նկատմամբ ունեցած մեր վստահությամբ և այն հավատով, որ Նա աշխատեց մեր փրկության համար Իր Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով: Մենք համոզված ենք, որ հնարավոր է դիմադրել սատանայի բոլոր շար խորհուրդներին և խոստումներին, որովհետև մենք միշտ մեր աչքերի առաջ ունենք հսկայական բազմությունն այն նշանավոր հայ մարտիրոսների, որոնք հրաժարվեցին երկրային կյանքից, որպեսզի հավատարիմ մնան Աստուծո, հաճելի երևան նրա աչքին և ընդունեն այն օրհնությունը, որ նրա ամենասիրելի Որդին պիտի բաշխի բոլոր աստվածասեր և աստվածավախ մարդկանց՝ ասելով. «Եկայք, օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցե՛ք զպատրաստեալ ձեզ զարգայութիւնն ի սկզբանէ աշխարհի» (Մատթ. ԻԵ 34):

Ո՛վ ողորմած Հայր, աղաչում ենք Քեզ, մեր Միջնորդ և Փրկիչ Հիսուս Քրիստոսի միջոցով, մե՛զ նույնպես տուր այդ շնորհները: Ամեն:

20 դեկտեմբերի 1964 թ.